ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«09» 01 2025թ. N 02/12-1/739-2025

«ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Ա. Բաբաջանյան 71շ. 23բն,
petrosyan2048@gmail.com

Ծանուցում

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Միասնական սոցիալական ծառայության և «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 26.12.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԾՁԲ-24/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի շրջանակներում «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից պետք է մատուցվեր 6700000 դրամ (վեց միլիոն յոթ հարյուր հազար) պայմանագրային գնով ծառայություններ:

«ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվել են մասնակի՝ չի մատուցվել 2187400 (երկու միլիոն յոթ հարյուր հազար դրամ) դրամ գնով ծառայություն:

Ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետով՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2025 թվականի հունվարի 9-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 26.12.2024 կնքված թիվ ՄՍԾ ԳՀԾՁԲ-24/2 գնման պայմանագիրը:

Պայմանագրի կատարման ապահովման մասով 850000 (ութ հարյուր հիսուն հազար) և 688.500 (վեց հարյուր ութսունութհազար հինգ հարյուր) ՀՀ դրամ որակավորման ապահովման մասով գումարները ենթակա են վճարման:

Միասնական սոցիալական ծառայությունը պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ձեր կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանջագրերը կներկայացնի նաև Ձեզ սպասարկող բանկին և բանկի կողմից վճարումն ամբողջությամբ ապահովելու դեպքում ևս պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Հրավերի 8.14 կետի համաձայն՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ, եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հայտնում եմ նաև, որ վերը նշված գործողությունների՝ վճարումների չիրականացման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Invalid signature

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010 **Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ապահովման բաժին
հեռ. (060) 654-031